Բարև՛, սիրելի՛ ընկեր,

Ես Ռոյան եմ: Այս պահին կյանքում առաջին անգամ նամակ եմ գրում մի մարդու, որին երբեք չեմ տեսել ու չեմ ճանաչում: Ես դա կարող եմ անել մի քանի անգամ, սակայն հնարավոր է նաև հնարավորություն ունենամ հանդիպելու, զրուցելու ու կապերը խորացնելու այն մարդու հետ, որին նամակ եմ գրում, բայց չեմ ճանաչում: Ցավոք, այս պահին իմ և քո միջև դա հնարավոր չէ: Պետք է խոստովանեմ, որ դա ինձ շատ է վշտացնում: Ես երբեք, անգամ վիրտուալ տիրույթում, հայի հետ չեմ խոսել, հայ չեմ տեսել: Ձեզ հետ հանդիպելու, զրուցելու հնարավորություն ունեցած ծանոթներս միշտ դրական կարծիք են հայտնել: Հեգնական չի՞ հնչում արդյոք այսքան մոտ լինելը, բայց երբեք հայ չտեսնելը: Ընկերներս հաճախ են ինձ բողոքում, թե ես ուտոպիայի մեջ եմ ապրում: Այո՛, ես սիրում եմ երազանքներ հորինել: Միշտ երազել եմ այնպիսի մի աշխարհի մասին, որտեղ բոլորը կապրեն խաղաղության ու անդորրի մեջ, որտեղ չեն լինի պատերազմներ ու սահմաններ, որտեղ չեն ոտնահարվի մարդու իրավունքները, որտեղ երեխաների դեմքին միշտ ժպիտ կլինի, որտեղ բոլորը կլինեն ազատ: Սակայն միայն երազելով չեմ սահմանափակվել և թվարկածս ամեն ինչին ամբողջ սրտով հավատացել եմ ու շարունակում եմ հավատալ: Գուցե թվարկածներս երբեք չլինեն, սակայն վստահ եմ՝ որքան շատ լինի այդ ամենին հավատացող մարդկանց թիվը, այնքան կնվազի բռնությունը, վայրենությունը, անգրագիտությունն ու ատելությունը: Ամեն ինչ սկսում է հավատքով և ավարտվում՝ հավատքով: Ինչին հավատում ենք, այն էլ իրական է: Այդ պատճառով էլ, բարեկամս, քեզ կոչ եմ անում խթանել խաղաղությունը, որքան հնարավորություն կունենաս: Մենք դա պետք է անենք ոչ միայն մեր հարազատների, ընկերների, ընտանիքի ու հայրենիքի անվտանգության, այլև՝ ամբողջ աշխարհի բարօրության համար:

Ճիշտ է, մենք չենք կարող ստիպել պատերազմ տեսած, կորուստներ կրած, ցավ տեսած մարդկանց մոռանալ այդ ամենը: Եվ պետք էլ չէ ստիպել մոռանալ: Չպետք է ստիպենք, այլ այդ ամենը նորից չվերապրելու համար պետք է անենք հնարավոր ամեն բան: Ամեն ինչ մեր ձեռքերում է, բարեկա՛մ:

Անհամբերությամբ կսպասեմ քո նամակին,

Ռոյա